ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

13 փետրվարի 2013 թվականի N 2 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013թ հիմնական միջոցառումների պլանի

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2013թ ապրիլի 17-ին Տավուշի մարզում շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը Այգեձորի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում >>թեմայով:
2.ՈՒսումնավարժությանը մասնակից դարձնել՝
1)Տավուշի մարզպետարանին.
2) Մարզային փրկարարական վարչությանը.
3) Այգեձոր և Չինարի համայնքներին.
4)ՔՊ մարզային ծառայություններին:
3. Շտաբային ուսումնավարժությունը պատշաճ մակարդակով նախապատրաստելու և անցկացնելու նպատակով.
1) Մարզային փրկարարական վարչության պետին՝
ա. Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը,
բ. Պատրաստ վիճակի կառավարման,կապի և ազդարարման համակարգերը.
2) ՔՊ մարզային ծառայությունների պետերին՝ 10-օրյա ժամկետում.
ա. Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը,
բ. Կազմակերպել ծառայությունների համալրումը անձնակազմով,տեխնիկայով, գույքով, անցկացնել պարապմունքներ.
3) Այգեձոր,Չինարի համայնքների ղեկավարներին՝
ա.Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը, տարահանման հանձնաժողովների կազմերը,

բ. Կազմակերպել պարապմունքներ համայնքների ազգաբնակչության շրջանում,
գ. Տեղերում ստուգել և ճշտել փրկարարական ուժերի հագեցվածությունը անձնակազմով, գույքով և տեխնիկայով:
4. ՈՒսումնավարժության ղեկավար նաշանակաել մարզային փրկարարական վարչության պետին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. Փետրվարի 13
ք. Իջևան